ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

18.11.2020թ. նիստի N 3 արձանագրություն

Օրակարգ

1. ԵԼՀ ֆակուլտետից «Լավագույն ուսանող» անվանակարգին ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
2. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի կազմում ընդգրկված 36 անդամներից նիստին ներկա էին 30-ը: ԵԼՀ ֆակուլտետի դեկան բ.գ.թ., դոցենտ Գ. Բարսեղյանը ներկայացրեց «Լավագույն ուսանող» անվանակարգին ներկայացվող ուսանողներին՝ հավելելով, որ բարձր է գնահատում նրանց առաջադիմությունը: Նա նշեց, որ ուրախալի փաստ է՝ ԵԼՀ ֆակուլտետը ամեն տարի ունենենում է թեկնածու ուսանողներ «Լավագույն ուսանող» անվանակարգին ներկայացնելու համար:

ԼՍԵՑԻՆ՝ ԵԼՀ ֆակուլտետից «Լավագույն ուսանող» անվանակարգին ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ բ.գ.դ.,պրոֆեսոր Ս.Գասպարյանը ներկայացրեց Անգլերեն լեզու գրականություն բաժնի մագիստրատուրա II կուրսի ուսանողուհի Օֆելյա Ասլիբեկյանին, հավելելով, որ նա միանգամայն արժանի է ներկայացվելու «Լավագույն ուսանող» անվանակարգին:

Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ բ.գ.դ., պրոֆեսոր Շ. Պարոնյանը ներկայացրեց իր բաժնում սովորող բակալավրի IV կուրսի ուսանողուհի Մելինե Մշեցյանին, նշելով, որ նա ցուցաբերել է բարձր առաջադիմություն և լիովին արժանի է առաջադրվելու «Լավագույն ուսանող » անվանակարգին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց հետևյալ ուսանողներին ներկայացնել «Լավագույն ուսանող» անվանակարգին:

1. Անգլերեն լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրա II կուրսի ուսանողուհի Օֆելյա Ասլիբեկյանին /ՄՈԳ 20/:
2. ԼՄՀ բակալավրի IV կուրսի ուսանողուհի Մելինե Մշեցյանին/ ՄՈԳ 19,96/:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և գիտխորհրդի

նախագահ, բ.գ.թ., դոց.՝ Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոց.՝ Մ.Դալալյան